



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 42

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17 -րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը:

1.Քարաշամբ համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վաճարների դրույքաչափերը սահմանելու մասին :

2.Քարաշամբ համայնքի ղեկավարի վարձատրության չափի որոշման մասին:

3.Քարաշամբի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի և պաշտոնական դրույքաչափերի հաստատման մասին:

4.Քարաշամբ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին:

5. Համայնքային սեփականության ամենամյա զույրագրման փաստաթղթերի հաստատման մասին:

6. Քարաշամբ համայնքի վարչական տարածքում գտնվող հողատարածքների համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

Կողմ -4

Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱԶԻԿ

2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

3. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐՄԵՆ

4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ



ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 43-Ն

ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ
ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀԱՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի 18,19,20 կետերով և «Տեղական
տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 10-
րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Սահմանել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն
հավելվածի:

Կողմ -4

Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱԶԻԿ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐՄԵՆ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

Համայնքի ղեկավար՝



ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ
ԴՐՈՒՑՔԱՉԱՓԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 11.

1. Տեղական տուրքերը դրույքաչափերը սույն օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ՝ օրենքով սահմանված կարգով:
2. Համայնքներում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելիս ավագանին կարող է առաջնորդվել գոտիավորման սկզբունքով, ընդ որում՝ տարբեր տեղական տուրքերի և վճարների համար կարող են սահմանվել տարբեր գոտիավորումներ (դրույքաչափերի տարբեր գործակիցներ):
3. Համայնքի վարչական տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական տուրքերի միասնական դրույքաչափեր, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի:
4. Ըստ համայնքների տեսակների (սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային, գյուղական կամ քաղաքային բնակավայրեր ներառող)՝ օրենքով կարող են սահմանվել տեղական տուրքերի դրույքաչափերի տարբեր գործակիցներ:
5. Օրացուցային տարվա համար ավագանու սահմանած տեղական տուրքի դրույքաչափերը փոփոխության չեն կարող ենթարկվել: Օրացուցային տարվա կամ եռամսյակի համար տեղական տուրքի դրույքաչափը համամասնորեն հաշվարկվում է սույն օրենքով սահմանված թույլտվությունների տրամադրման օրվանից սկսած մինչև օրացուցային տարվա կամ եռամսյակի ավարտը:

Հոդված 12.

ի դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.
 - 1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.
 - ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝
մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսու հազար դրամ:

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ:

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար մեկ դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամ

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամի

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամ

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում, Առևտրի և ծառայությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

- ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ,
- բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ
- դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,
- ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ
- զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.

12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար **տեղական** տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

- ա. հիմնական շինությունների ներսում՝
 - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,
 - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար մեկ դրամ,
 - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար մեկ դրամ,
 - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամ,
 - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար մեկ դրամ,
 - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար մեկ դրամ.
- բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
 - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,
 - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամ,
 - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար մեկ դրամ,
 - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար մեկ դրամ,
 - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար մեկ դրամից դրամ,
 - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամ.

13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

- ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,
- բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,
- գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,
- դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

Ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

14) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

17) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

:

18. Քառաշամբ համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ մեկ հազար դրամ:

19.Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վեցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափազրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝

1)մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար հիսուն դրամ:

2)1001 քառակուսի մետրից ավել հողամաս ունեցող հողամասերի համար՝ տաս հազար դրամ գումարած 1000 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս տաս դրամ:

20.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճար սահմանել՝ հինգ հազար դրամ:

21.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է.

1) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100դրամ, կամ

2) ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 դրամ:

3) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 դրամ,

2) հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 դրամ,

3) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 դրամ.

4) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 3 դրամ:

5) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկել առավել բարձր դրույքաչափով:

22.Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել 1 տոննա աղբի համար տաս հազար դրամ:

23. Հասցեի որոշում տրամադրելու համար՝ հազար դրամ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 44-Ա

ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ կետի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել ամսական 280000 դրամ:

Կողմ -4

Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱԶԻԿ

2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

3. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐՄԵՆ

4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

Համայնքի ղեկավար



ՉՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 45-Ա

ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Քարաշամբ համայնքապետարանի աշխատակազմի
աշխատակիցների թվաքանակի և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն
հավելվածի:

Կողմ -4

Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱԶԻԿ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐՄԵՆ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

Համայնքի ղեկավար՝



ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ



Հավելված
Քարտաշամբի համարների 22 - ի հոդվածով

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
Քարտաշամբի համարաբաշխության աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի և պաշտոնական դրույքապահների

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելում	Հավելավճար	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1		Համայնքի ղեկավար	Քաղաքական	-	280000	1			280000
2		Համայնքի ղեկավարի տեղակալ	Հայացքողական	-	155000	1			155000
3		Աշխատակազմի քարտուղար	Համայնքային ծառայող	1.2-1	155000	1			155000
4	Գյուղատնտեսության աշխատակազմ	Առաջատար մանեգետ	Համայնքային ծառայող	3.1-1	145000	1		5800	150800
5		1-ին կարգի մանեգետ	Համայնքային ծառայող	3.2-1	100000	1			100000
6		Հավաքարար			38952	0.5			38952
7	Շրջաններ	Պահակ			77904	1			77904
									957656

Աշխատակիցների թվաքանակը՝ 7



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 46-Ն

ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՅԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի 5 - րդ կետի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Քարաշամբ համայնքի 2018 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածներ
1,2,3,4,5,6 :

Կողմ -4

Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱԶԻԿ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐՄԵՆ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

Համայնքի ղեկավար



ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 47

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնքառավարման մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի 32 - րդ կետի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածների:

Կողմ -4

Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱԶԻԿ

2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

3. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐՄԵՆ

4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

Համայնքի ղեկավար՝



ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ



Հավելված
Քարաշամբ համայնքի ավագանու
22.12.2017թ. N 47 որոշման

Քարաշամբի համայնքապետարան

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿ N 1

Գույքագրման անցկացման հիմքը - համայնքի ղեկավարի 01.12.2017թ. N 7
կարգադրություն

Գույքագրման սկսելու ամսաթիվը - 01.12.2017թ.

Գույքագրման ավարտելու ամսաթիվը - 22.12.2017թ.

Հիմնական միջոցներ

Գտնվելու վայրը - Կոտայքի մարզ, գյուղ Քարաշամբ

Գույքագրման սկզբում հիմնական միջոցների մուտքի և ելքի բոլոր փաստաթղթերը հանձնված են հաշվապահություն: Մեր պատասխանատվությամբ ստացված բոլոր հիմնական միջոցները մուտքագրված են, իսկ բաց թողնվածները՝ ելքագրված:

Հիմնական միջոցների պահպանման համար պատասխանատու անձինք
Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Քարաշամբ
Ռայա խլդաթյան (ստորագրություն)

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման
Սմբատյան (ստորագրություն)

h/h	Օբյեկտի անվանումը և համառոտ բնութագիրը	Փաստացի առկայությունը		Հաշվապահական հաշվառման տվյալներով	
		Քանակը	Արժեքը	Քանակը	Արժեքը
1	2	7	8	9	10
1	Գյուղապետարանի շենք	1	10144325	1	10144325
2	Աղբյուր-հուշարձան	1	56897	1	56897
3	Էլ. ենթակայան	1	781787	1	781787
4	Ոռոգման ջրագծեր	2	2782246	2	2782246
5	Էլ. գծեր	2	770246	2	770246
6	Գրասենյակի նախկին շենք	1	245246	1	245246
7	Գրապահարան	1	5678	1	5678
8	Գրամեքենա	1	14541	1	14541
9	Գրասեղան	1	12118	1	12118
10	Բնանկար	1	20828	1	20828
11	Սեղան	1	60000	1	60000
12	Դահլիճի բազկաթոռ	10	42586	10	42586

13	Դակիչ	1	460	1	460
14	Աթոռ երկաթե ոտքերով	2	246	2	246
15	Սեղան երկու տումբանի	4	1463	4	1463
16	Գրասեղան	3	970	3	970
17	Գրասեղան	1	80000	1	80000
18	Երկաթյա պահարան	3	66240	3	66240
19	Աթոռ	10	100000	10	100000
20	Հեռախոսի սարք	1	11160	1	11160
21	ՀՀ դրոշ	2	2600	2	2600
22	Համակարգիչ	1	560000	1	560000
23	Փայտից հաշվիչ	1	1390	1	1390
24	Մշակույթի տան շենք	1	98449830	1	98449830
25	«Արարատյան դաշտավայր» բնանկար	1	31738	1	31738
26	Նկար «Սևանա լիճ»	1	73005	1	73005
27	Բնանկար	1	73005	1	73005

28	Գրականություն	4600	236522	4600	236522
29	Փայտից գրապահարան	13	24975	13	24975
30	Ընթերցասեղան	2	111	2	111
31	Ցուցափեղկ	3	634	3	634
32	Սեղան 1 տումբանի	2	346	2	346
33	Կատալոգի արկղ	2	463	2	463
34	Ջայնապնակների արկղ	2	8309	2	8309
35	Ջայնապնակների դարակ	2	12169	2	12169
36	Սեղաններ	2	346	2	346



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 48

ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի N 186 - Ն հրամանով և հաշվի առնելով Քարաշամբ համայնքի վարչական տարածքում գտնվող ամառանոցային թաղամասի 07-066-0104-0160 - 0.00589 հա, 07-066-0104-0159 - 0.00852 հա ծածկագրերի տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի հողերը թյուրիմացաբար քարտեզագրման ժամանակ գրվել որպես սեփականություն: Այդ հողատարածքի տերը անհայտ է և դրա վերաբերյալ գոյություն չունեն իրավունք հաստատող փաստաթղթեր :

Համայնքի ավագանին որոշում է.

1.Քարաշամբ համայնքի վարչական տարածքում գտնվող ամառանոցային թաղամասի 07-066-0104 -0160- 0.00589 հա, 07-066-0104-0159 - 0.00852 հա կադաստրային ծածկագրերի տակ գտնվող բնակավայրի

շանակության բնակելի կառուցապատման հողերը համարել համայնքային
սեփականություն:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի կադաստրին՝
համապատասխան ուղղում կատարելու համար:

Կողմ -4

Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱԶԻԿ

2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

3. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐՄԵՆ

4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

(Handwritten signatures for the four individuals listed above)

Համայնքի ղեկավար՝



ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ